ՔԱՂՎԱԾՔ
ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԳԵՂԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016Թ-Ի ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԻՑ

Քննարկումը տեղի է ունեցել համայնքապետարանում, որը սկսվել է 2017 թվականի հունվարի 18-ին ժամը 14-^{00}-ին:
Քննարկմանը մասնակցել են Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԾ հարցերի բաժնի պետ Գոռ Հովհաննիսյանը, համայնքի միջնակարգ դպրոցի տնօրենը, բուժ ամբուլատորիայի տնօրենը և աշխատակիցները, ավագանու անդամները, մանկապարտեզի տնօրենը, համայնքապետարանի աշխատակազմի աշխատողները և համայնքի բնակիչներ:

2016 ընթացքում համայնքում կատարվել են ներքոնշյալ աշխատանքները՝
Անցկացվել է Համայնքի ավագանու 12 նիստ, որոնց ժամանակ քննարկվել են համայնքում կարևոր լուծում պահանջող հարցեր, իսկ ավագանու որոշումները փակցված են համայնքում՝ համայնքապետարանի շենքում՝ բնակիչների համար տեսանելի տեղում:

Կազմակերպվել և իրականացվել է ներհամայնքային առուների մաքրման աշխատանքներ, այդ թվում նաև՝ կիսախողովակների:

Կատարվել է դաշտամիջյան ճանապարհների հողալցման և հարթեցման աշխատանքներ՝ նախապատրաստվելով բերքահավաքին:

Խճապատվել են համայնքի մի շարք փողոցներ:

Տեառընդառաջի կապակցությամբ կազմակերպվել է միջոցառում և համայնքի 10 նորապսակ ընտանիքների շնորհավորելու համար յուրաքանչյուր ընտանիքի հատկացվել է 15000 – ական դրամ:

Համայնքում նորմալ սանիտարական վիճակի ապահովման համար շաբաթական երկու անգամ աղբահավաք տրանսպորտային միջոցով կատարվում է աղբահավաքման աշխատանքներ:

Ժամանակին վճարվել է համայնքապետարանի և մանկապարտեզի աշխատողների աշխատավարձը և սոց. վճարները:
Կազմակերպվել են միջոցառում՝ նվիրված կանանց տոնին, Հայրենական մեծ պատերազմի և Շուշիի ազատագրման տարելիցներին, Ամանորի և Սուրբ ծննդյան տոներին, ինչպես նաև հատկացվել են նվերներ:
Կազմակերպվել է Տեղասպանության զոհերի հիշատակի օրվան նվիրված միջոցառում, ինչպես նաև ապահովվել է համայնքի բնակիչների մասնակցությունը ջահերով երթին:

Համայնքի բյուջեի ֆոնդային մասի միջոցներից հատկացվել է երեք միլիոն հինգ հարյուր յոթ հազար վեց հարյուր դրամ, որն օգտագործվել է համայնքի մանկապարտեզի շենքի վերանորոգման համար:

Բնակիչների ամառային հանգստի միջոցառումների կազմակերպման շրջանակներում համայնքի շուրջ 400բնակիչ համայնքի կողմից տրամադրված գումարով և ավտոբուսներով մեկնել է Սևան՝ մեկօրյա հանգստի:
Համայնքի տարածքում կազմակերպվել է շաբաթօրյակ և մաքրվել է կենտրոնական փողոցը և գյուղամիջյան հատվածը:

Համայնքի վարչական բյուջեի միջոցներից հատկացվել է սոցիալական օգնություն՝ համայնքի երիտասարդ15 ընտանիքի/յուրաքանչյուրին 50.000 դրամ/, համայնքի անապահով բնակիչներին, Արցախյան ազատամարտի մասնակիցներին, Արցախյան ազատամարտում զոհվածների ընտանիքներին, քառօրյա պատերազմի մասնակիցների ընտանիքներին, 3 զորակոչիկի և որպես Արցախին հատկացվող օգնություն, ինչպես նաև Ամանորի կապակցությամբ համայնքի շուրջ 144 ընտանիք /զինծառայողների, հաշվանդամ ընտանիքի անդամ ունեցող բնակիչների, բազմազավակ ընտանիքների/ հատկացվել է 20,000-ական դրամ ՝ ընդամենը տասը միլիոն դրամ:

Համայնքի տարածքում պատշաճ մակարդակով կազմակերպվել են ամառային և ձմեռային զորակոչերը:

Ձեռք են առնվել միջոցներ սպասվող բերքահավաքը պատշաճ ձևով՝ առանց խոչընդոտների կազմակերպելու և իրականացնելու համար:
Այս ժամանակահատվածում կազմակերպվել է քաղաքացիների ընդունելություններ, պատասխանվել է նրանց բոլոր հարցերին, դիմումներին և տրամադրվել է պահանջվող փաստաթղթերը:
Տարվա կտրվածքով բյուջեի եկամուտները հավաքագրվել և ծախսերը կատարվել են հետևյալ համամասնություններով՝ հարկային եկամուտները՝ հողի հարկ պլան 13500.7հ/դ , փաստացի 13565.4/դ, կատարողական 100.5%, գույքահարկ պլան 4096.7 հ/դ, փաստացի 4561.2 հ/դ, կատարողական 111.3 %, տեղական տուրքեր պլան 287.0 հ/դ, փաստացի 251.6/դ, կատարողական 87.7%, այլ ոչ հարկային եկամուտներ պլան 241,0 հ/դ, փաստացի 227.2 հ/դ, կատարողական 94.3% դոտացիա պլան 45582.9 հ/դ, փաստացի 45582.9 հ/դ, կատարողական 100%, տարեսկզբի ազատ մնացորդ 13394.3 հ/դ , հողի և գույքի օտարումից սպասվելիք գումար՝ պլան 1000,0հ/դ: ընդամենը եկամուտներ՝ պլան 78102,6 հ/դ, փաստացի 77582,6 հ/դ, կատարողական 99,3 % :
Ծախսեր՝ Տեղական ինքնակառավարում պլան 32672.3 հ/դ, փաստացի 28956.3 հ/դ, կատարողական 88.6 %, սոց. օգնություն պլան 10000.0 հ/դ,փաստացի 10000,0 հ/դ, կատարողական 100%, մշակույթ, սպորտ և կրոն պլան 2000,0 հ/դ, փաստացի 2000.0 հ/դ, կատարողական 100%, սան մաքրում պլան 2500,0հ/դ, փաստացի 2424,2հ/դ, կատարողական 97%, կրթություն և գիտություն պլան 11186,0 հ/դ, փաստացի 7817,2հ/դ, կատարողական 69,9 %, ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ պլան 3400,0/դ, փաստացի 2385,0հ/դ , կատարողական 70,1% , արտաքին լուսավորում պլան 950,0հ/դ, փաստացի 950,0հ/դ, ճանապարհների վերանորոգում պլան 1000,0հ/դ, փաստացի 1000,0հ/դ, կատարողական 100%, ֆոնդային բյուջե 14394,3հ/դ, փաստացի 5863,0 հ/դ, կատարողական 40,7 %,: Ընդամենը ծախսեր պլան 78102,6 հ/դ, փաստացի 61395,7 հ/դ, կատարողական 78,6 % :

Տեղի ունեցավ քննարկում, որի ժամանակ բարձրացվեցին հետևյալ հիմնախնդիրները՝

Համայնքում առկա խնդիրներն են

Հիմնովին վերանորոգման կարիք ունի Մշակույթի տան երկրորդ և երրորդ հարկերն ու տանիքը:
Անմխիթար վիճակում է գտնվում խմելու ջրի ցանցը՝ ջրատար խողովակները ամբողջությամբ վնասված են:
Անհրաժեշտ է ավարտին հասցնել գյուղի մնացած փողոցների խճապատումը:
Պետք է շարունակվի ու ավարտին հասցվի դպրոցի ներքին հարդարման աշխատանքները:
Հիմնովին վերանորոգման կարիք ունի գյուղի Ծանրամարտի մարզադպրոցը:
Կարևոր նշանակություն ունի համայնքի Բուժ ամբուլատորիայի համար շտապ օգնության մեքենայի առկայությունը, քանի որ այն սպասարկում է 4 համայնք:
Անմխիթար վիճակում է գտնվում համայնքը սնուցող էլեկտրական ցանցը, անջատումներն տեղի են ունենում շատ հաճախակի՝ կապված լարերի անպիտանիության հետ:
Հնարավորինս լուծել համայնքի փողոցների լուսավորության հարցը:

Գեղակերտ համայնքի ղեկավար Ս. Առաքելյան

18.01.2017թ